

«Մասրիկ-1» Արևային էլեկտրակայան

Երկիր՝	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համար՝	50022
Բիզնես ոլորտ՝	Էներգետիկա, Եվրասիա
Ծանուցման տեսակ՝	Մասնավոր
Բնապահպանական դասակարգ՝	B
Թիրախային խորհրդի հաստ. ամսաթիվ՝	Հուլիսի 10, 2019
Կարգավիճակ՝	Հայեցակարգը վերանայվել է
Ծրագրի ամփոփ փաստաթղթի (ՇԱՓ-PSD) հրապարակման ամսաթիվ՝	Մայիսի 17, 2019

Ծրագրի նկարագրություն

Մինչև 41 մլն. ԱՄՆ դոլարի չափով երկարաժամկետ պարտավարության ֆինանսավորում՝ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) հետ համատեղ՝ ուղղված ՀՀ Գեղարքունիքի մարզի Մասրիկ քաղաքում 55 ՄՎտ պիկային հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի նախագծման, կառուցման և շահագործման համար: ՎԶԵԲ-ը կտրամադրի դրամաշնորհային ֆինանսավորում՝ այն մոբիլիզացնելով Եվրոպական Միության հարևանության ներդրումային պլատֆորմի(NIP) միջոցով՝ ծրագրին աջակցելու նպատակով:

Ծրագրի նպատակները

Ծրագիրը խթանում է Բանկի «Կանաչ տնտեսության անցումային մոտեցումը» և աջակցում է ՀՀ կառավարության կողմից ցածր ածխածնի արտադրության խթանման ռազմավարությանը՝ առաջարկելով Հայաստանի էներգետիկ հավասարակշռության համար ավելի էժան ու մաքուր էներգիայի աղբյուր և բացահայտելով երկրի վերականգնվող էներգետիկայի ներուժը՝ արևային էներգիայի արտադրության ոլորտը Հայաստանում հզորացնելու ճանապարհով:

Անցումային ազդեցություն

Անցումային ազդեցությունը պայմանավորված է ՎՋԵԲ-ի «Անցում կանաչ տնտեսությանը» (ԱԿՏ) մոտեցմանը նախագծի հնարավոր ներդրումից, քանի որ այն թույլ կտա էլեկտրաէներգիա արտադրել՝ օգտագործելով արևային ճառագայթումը, ինչը կհանգեցնի ՋԳ արտանետումների նվազմանը:

Պատվիրատուի մասին տեղեկություն

«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» ՓԲԸ

«ԷՖԱՐՎԻ ՄԱՍՐԻԿ» Փակ բաժնետիրական ընկերությունը հատուկ նշանակությամբ ընկերություն է (SPV), որը հիմնվել է 55 ՄՎտ հզորությամբ «Մասրիկ» արևային ֆոտովոլտային կայանի նախագծման, կառուցման և շահագործման համար:

Ընկերության 75% -ը պատկանում է «FRV La Providencia UL»-ին և 25% -ը պատկանում է «FSL Solar, S.L.»-ին:

ՎՋԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

20,300,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեքը

57,000,000.00 ԱՄՆ դոլար

Բնապահպանական և սոցիալական ամփոփում

Կատեգորիա B (ESP 2014): Բնապահպանական, սոցիալական ռիսկերը և ազդեցությունները, որոնք կապված են դաշտում տեղակայված 55 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի շինարարության և շահագործման հետ, գնահատվում են որպես՝ անկախ միջազգային խորհրդատուի կողմից իրականացվող «Բնապահպանական և սոցիալական համապատասխանության» հետազոտության մաս (ESDD) և դրա ազդեցությունները կմեղմացվեն «Բնապահպանական և սոցիալական գործողությունների» ծրագրով (ESAP):

Բնապահպանական և սոցիալական հնարավոր բացասական ազդեցությունները կապված են հիմնականում շինարարության, առողջության, անվտանգության և սոցիալական ստանդարտների և կարողությունների, հողի օգտագործման և կենսաբազմազանության կառավարման հետ:

Հաշվի առնելով, որ ծրագիրը գտնվում է Սևանի լճի Ռամսարի շրջանում, իրականացվում է կենսաբազմազանության համապարփակ գնահատում, որը կավարտվի մինչև 2019 թ. հունիսի վերջը: Կենսաբազմազանության նախնական գնահատումը և կրիտիկական վիճակում գտնվող բնակամիջավայրերի գնահատումը կրիտիկական բնակամիջավայրեր չեն առանձնացրել: Տեղանքը ներկայացված է փոփոխված միջավայրի տեսքով, ինչպես օրինակ, գյուղատնտեսական նշանակության և արոտավայրային հողեր, որոնք չեն պարունակում կարևոր և վտանգված կենսաբազմազանության արժեքներ: Կենսաբազմազանության վրա ազդեցությունները

կհասցեագրվեն կառավարման արդյունավետ գործելակերպի իրականացման միջոցով, այդ թվում, թռչունների համար անվտանգ լարերի մշակման, շինարարական արդյունավետ պրակտիկայի միջոցով, որոնք ներառված են Բնապահպանական, սոցիալական և կառավարման մոնիտորինգի ծրագրում (ESMMP):

Ծրագիրը կապված է հողօգտագործման հետ, և ըստ այդմ, մշակվել է Կենսապահովման վերականգնման համապարփակ ծրագիր:

Ծրագրի ընթացքում իրականացվել է լայնածավալ հասարակական խորհրդատվություն և մշակվել են ազգային ESIA՝ բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում և շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (SEP):

Ծրագրին բնորոշ բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը (ESAP) կներառի շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման բարելավումների մի շարք դրույթներ, մասնավորապես՝ EHS կառավարման համակարգի բարելավում, կապալառուի և մատակարարման շղթայի կառավարում, կենսաբազմազանության կառավարում և մոնիտորինգ, շինարարական աղմուկի և արտանետումների կրճատում, շահագրգիռ կողմերի ներգրավում և բողոքարկման մեխանիզմ:

Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ, մինչ տնօրենների խորհրդի համաձայնությունը և դրա իրականացումը, իսկ ընդհանուր բնապահպանական և սոցիալական գործողությունները մոնիթորինգի կենթարկվեն Բանկի կողմից՝ Տարեկան բնապահպանական և սոցիալական զեկույցների միջոցով:

Ծրագրի համար պատրաստվել է ոչ տեխնիկական ամփոփագիր (NTS), որը հասանելի է ստորև հղմամբ:

ԾԱՓ-PSD- ն թարմացվելու է Բնապահպանական և սոցիալական համապատասխանության ուսումնասիրությունից հետո:

Տեխնիկական համագործակցություն

Կոնտակտային տվյալներ

Կիրիլ Պերրոտեյ

cyril.perrotey@frv.com

+971 4 2495633

<http://frv.com>

Units 1403-1404, 14th Floor, Jumeirah Business Center 1, Cluster G, Jumeirah Lakes Towers,
P.O. Box 392632, Dubai, United Arab Emirates

Գործնական հնարավորություններ

Գործնական համագործակցության կամ գնումների համար՝ կապվեք պատվիրատուի ընկերության հետ:

Ընդհանուր հարցումներ

ՎՋԵԲ-ի մասին հարցումներ, որոնք կապված չեն գնումների հետ՝

Հեռ. +44 20 7338 7168; Fax: +44 20 7338 7380

Էլ.հասցե՝ projectenquiries@ebrd.com

Հանրային տեղեկատվական քաղաքականություն (ՀՏՔ-PIP)

ՀՏՔ-ն սահմանում է ՎՋԵԲ-ի կողմից տեղեկատվության տարածման և շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցելու կարգը, որպեսզի խթանի իր ռազմավարության, քաղաքականության և գործառնությունների վերաբերյալ արդյունավետ իրազեկումը և ըմբռնումը:

ՀՏՔ-PIPի տեքստը

Ծրագրի բողոքարկման մեխանիզմ (ԾԲՄ-PCM)

ՎՋԵԲ-ը հիմնել է Ծրագրի բողոքարկման մեխանիզմ (ԾԲՄ-PCM), որը հնարավորության կրնձեռի անկախ ուսումնասիրություն իրականացնել ՎՋԵԲ-ի կողմից ֆինանսավորված ծրագրերի վերաբերյալ անհատների կամ կազմակերպությունների կողմից ստացված բողոքների վերաբերյալ, որոնք ենթադրաբար առաջացրել են կամ հավանական է, որ կպատճառեն վնաս:

[ԾԲՄ կանոնները ու ընթացակարգերը](#) | [ռուսերեն տարբերակ](#)

ԾԲՄ-ի շրջանակներում ցանկացած բողոք պետք է ներկայացվի ոչ ուշ, քան ՎՋԵԲ-ի միջոցների վերջին բաշխման պահից 12 ամիս անց: Դուք կարող եք դիմել ԾԲՄ - ի աշխատակցին (pcm@ebrd.com- ով) կամ ՎՋԵԲ-ի համապատասխան գրասենյակ՝ օգնության համար, եթե դուք չեք կողմնորոշվում, թե որ ժամանակահատվածում է պետք բողոք ներկայացնել: